ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

23.01.2026Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երևան

2026 թվականի հունվարի 23-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շահերի բախման իրավիճակների կառավարման մեթոդական ուղեցույցի նախագծի նախնական քննարկում:

Օրակարգում ներառված հարցը ներկայացվեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից: Նախագիծը քննարկվել է Հանձնաժողովի անդամների կողմից, ինչի արդյունքում որոշվեց խմբագրել Շահերի բախման իրավիճակների կառավարման մեթոդական ուղեցույցի նախագիծը՝ Հանձնաժողովի անդամների դիտարկումների հիման վրա:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Խմբագրել Շահերի բախման իրավիճակների կառավարման մեթոդական ուղեցույցի նախագիծը՝ Հանձնաժողովի անդամների դիտարկումների հիման վրա:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝	ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝	ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ